ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 08.01.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ

թիվ ՍՑ-ԷՍ-2018/193

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ) ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 13.12.2018թ. թիվ 27/26-3/23209-18 գրությամբ «ֆուդբազա» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 02673312) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ ԱՍՀՆ Երևանի «Մարի Իզմիրլյանի անվան մանկատուն» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 07.12.2018թ. թիվ 0-730 գրության հիման վրա, 13.12.2018թ. նախաձեռնել է «ֆուդբազա» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ նաև Ցուցակ) ներառելու ընթացակարգ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

2. <u>ԱՍՀՆ Երևանի «Մարի Իզմիրլյանի անվան մանկատուն» ՊՈԱԿ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

ԱՍՀՆ Երևանի «Մարի Իզմիրլյանի անվան մանկատուն» ՊՈԱԿ-ը 07.12.2018թ. թիվ 0-730 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և «ֆուդբազա» ՍՊԸ-ի միջև 09.04.2018թ. կնքված N «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-18/6-Ե-1-ՄԻ-ՖԲ» ծածկագրով «Մարի Իզմիրլյանի անվան մանկատուն» ՊՈԱԿ-ի կարիքների համար սանհիգիենիկ պարագաների մատակարարման հետ կապված պայմանագրի էական խախտումների հետևանքով «Մարի Իզմիրլյանի անվան մանկատուն» ՊՈԱԿ-ը միակողմ հրաժարվել և լուծել է կողմերի միջև կնքված մատակարարման պայմանագիրը»:

Պատվիրատուն պատշաճ ծանուցվել է Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը նիստերին:

3. <u>«Ֆուդբազա» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը դիմել է «Ֆուդբազա» ՍՊԸ-ին՝ հնարավորություն ընձեռելով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 13.12.2018թ. թիվ 27/26-3/23209-18 գրությամբ Բողոքներ քննող անձի մոտ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել Ընկերության գրավոր դիրքորոշումը, սակայն վերջինիս կողմից որևէ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով Բողոքներ քննող անձի մոտ կայանալիք նիստերի ժամանակացույցի վերաբերյալ՝ չէր ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը նիստերին:

4. <u>ՍՑ-ԷՍ-2018/193 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է ՀՀ ֆինանսների նախարարության 13.12.2018թ. թիվ 27/26-3/23209-18 գրությունը և կից փաստաթղթերը, ԱՍՀՆ Երևանի «Մարի Իզմիրլյանի անվան մանկատուն» ՊՈԱԿ-ի 07.12.2018թ. թիվ 0-730 գրությունը, ԱՍՀՆ Երևանի «Մարի Իզմիրլյանի անվան մանկատուն» ՊՈԱԿ-ի և «ֆուդբազա» ՍՊԸ-ի միջև 09.04.2018թ. կնքված սանիհիգիենիկ պարագաների մատակարարման «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-18/6-Ե-1-ՄԻ-ՖԲ» ծածկագրով գնման պայմանագիրը.

ԱՍՀՆ Երևանի «Մարի Իզմիրլյանի անվան մանկատուն» ՊՈԱԿ-ի և «ֆուդբազա» ՍՊԸ-ի միջև 09.04.2018թ. կնքվել է սանիհիգիենիկ պարագաների մատակարարման «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-18/6-Ե-1-ՄԻ-ՖԲ» ծածկագրով գնման պայմանագիրը (այսուհետ՝ նաև Պայմանագիր):

Պայմանագրի՝

• 1.1 կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է նույն պայամանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

• 2.1.1 կետի համաձայն՝ Գնորդն իրավունք ունի՝ ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

• 2.1.7 կետի համաձայն՝ Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

• 2.1.7.1 կետի համաձայն՝ Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

• 2.2.4 կետի համաձայն՝ Գնորդը պարտավոր է ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ

ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

• 2.4.1 կետի համաձայն՝ Վաճառողը պարտավոր է Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

• 2.4.2 կետի համաձայն՝ Վաճառողը պարտավոր է Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

• 2.5 կետի համաձայն՝ ՀՀ կառավարության 2007թ. մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 104-րդ կետի պահանջներին համապատասխան Պայմանագրով սահմանված Գնորդի իրավունքների և պարտականությունների իրականացումը վերապահվում է «Մարի Իզմիրլյանի անվան մանկատուն» ՊՈԱԿ-ին:

• 3.1 կետի համաձայն՝ Պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 1,316,000 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ):

• 5.1 կետի համաձայն՝ Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը: Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ:

• 5.2 կետի համաձայն՝ հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվում է, եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում(...):

• 5.3 կետի համաձայն՝ Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա

ընթացքում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ապրանքը չստանալու պատճառաբանված մերժումը:

• 8.9 կետի համաձայն՝ Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, նույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

Պայամանգրի .N 1 հավելվածով նախատեսված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ Ընկերությունը պարտավորվել է մատակարարել մանկական տակդիրներ N6 /14000 հատ/:

Նույն Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով ապրանքի մատակարարման վերջնաժամկետ է սահմանվել՝ ըստ Պատվիրատուի պահանջի՝ մինչև 20.12.2018թ.:

09.10.2018թ. Պատվիրատուի կողմից Ընկերությանն ուղարկվել է պատվեր-հայտ N4, որով Պատվիրատուն պահանջել է մատակարարել թվով 10114 հատ տակդիր, որպես ապրանքների մատակարարման ժամկետ նշելով 22.10.2018թ:

15.12.2018թ. Պատվիրատուի կողմից դարձյալ Ընկերությանն ուղարկվել է պատվեր-հայտ N4, որով Պատվիրատուն պահանջել է մատակարարել թվով 10114 հատ տակդիր, որպես ապրանքների մատակարարման ժամկետ նշելով 19.11.2018թ:

23.10.2018թ. ԱՍՀՆ Երևանի «Մարի Իզմիրլյանի անվան մանկատուն» ՊՈԱԿ-ի անձնակազմի մի շարք անդամների (տնտեսագետ, պահեստապետ, տնտեսուհի) կողմից կազմվել է արձանագրություն առ այն, որ ՀՀ ԱՍՀ նախարարության և «ֆուդբազա» ՍՊԸ-ի միջև կնքված «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-18/6-Ե-1-ՄԻ-ՖԲ» ծածկագրով գնման պայմանագիրը պատշաճ չի իրականացվել մատակարարի կողմից, քանի որ Պատվիրատուի կողմից 09.10.2018թ. պատվերը պետք է մատակարարվեր մինչև 22.10.2018թ.:

05.12.2018թ. ԱՍՀՆ Երևանի «Մարի Իզմիրլյանի անվան մանկատուն» ՊՈԱԿ-ի անձնակազմի նույն անդամների կողմից կազմվել է ևս մեկ արձանագրություն առ այն, որ ՀՀ ԱՍՀ նախարարության և «ֆուդբազա» ՍՊԸ-ի միջև կնքված «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-18/6-Ե-1-ՄԻ-ՖԲ» ծածկագրով գնման պայմանագիրը պատշաճ չի իրականացվել մատակարարի կողմից, քանի որ Պատվիրատուի կողմից 09.10.2018թ. և 15.11.2018թ. պատվերները պետք է մատակարարվեին համապատասխանաբար մինչև 22.10.2018թ. և 19.11.2018թ.:

Պատվիրատուն 05.12.2018թ. գրությամբ դիմել է «ֆուդբազա» ՍՊԸ-ին՝ հայտնելով, որ «Մարի Իզմիրլյանի անվան մանկատուն» ՊՈԱԿ-ի և «ֆուդբազա» ՍՊԸ-ի միջև 09.04.2018թ. կնքված N «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-18/8-Տ» ծածկագրով գնման պայմանագրի շրջանակներում Ընկերությունը պետք է ՊՈԱԿ-ին մատակարարեր 14000 հատ մանկական տակդիր՝ ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող յուրաքանչյուր հայտ-պատվերի համաձայն՝ չխախտելով մատակարարման ժամկետները: Սակայն Ընկերության կողմից մատակարարվել է ընդամենը 3886 հատ մանկական տակդիր:

Նույն գրությամբ Պատվիրատուն նշել է, որ Ընկերության կողմից բազմիցս խախտվել են Պայմանագրի 2.1.1 կետի պահանջները, և նախազգուշացրել է, որ մինչև 06.12.2018թ. ապրանքի մնացած մասը ողջ ծավալով չմատակարարելու դեպքում Պայմանագիրը միակողմանի կլուծվի համաձայն Պայմանագրի 2.1 և 2.1.7.1 կետի բ) ենթակետի:

07.12.2018թ. Պատվիրատուն թիվ 0-726 գրությամբ դարձյալ դիմել է «ֆուդբազա» ՍՊԸ-ին՝ հայտնելով, որ «Մարի Իզմիրլյանի անվան մանկատուն» ՊՈԱԿ-ի և «ֆուդբազա» ՍՊԸ-ի միջև 09.04.2018թ. կնքված N «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-18/6-Ե-1-ՄԻ-ՖԲ» ծածկագրով գնման պայմանագրի էական խախտումների հետևանքով «Մարի Իզմիրլյանի անվան մանկատուն» ՊՈԱԿ-ը 07.12.2018թ. միակողմ հրաժարվել և լուծել է կողմերի միջև կնքված մատակարարման պայմանագիրը:

Պատվիրատուն գրությանը կից ներկայացրել է նաև Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին «Մարի Իզմիրլյանի անվան մանկատուն» ՊՈԱԿ-ի տնօրենի ժ/պ-ի 07.12.2018թ. N1 որոշումը:

Պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցումը 13.12.2018թ. Պատվիրատուն հրապարակել է նաև www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի

«Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 6-րդ հոդվածի՝

- 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը.
- 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող անձի մոտ՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Այսպիսով, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

- «Մարի Իզմիրլյանի անվան մանկատուն» ՊՈԱԿ-ի և «ֆուդբազա» ՍՊԸ-ի միջև 09.04.2018թ. կնքված N «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-18/6-Ե-1-ՄԻ-ՖԲ» ծածկագրով գնման պայմանագրով Ընկերությունը պարտավորվել է մատակարարել մանկական տակդիրներ N6 /14000 հատ/՝ 1,316,000 ՀՀ դրամ ընդհանուր գնով:

- 09.10.2018թ. Պատվիրատուի կողմից Ընկերությանն ուղարկվել է պատվեր-հայտ N4, որով Պատվիրատուն պահանջել է մատակարարել թվով 10 114 հատ տակդիր, որպես ապրանքների մատակարարման ժամկետ նշելով 22.10.2018թ:

- 15.11.2018թ. Պատվիրատուի կողմից Ընկերությանն ուղարկվել է պատվեր-հայտ N4, որով Պատվիրատուն պահանջել է մատակարարել թվով 10 114 հատ տակդիր, որպես ապրանքների մատակարարման ժամկետ նշելով 19.11.2018թ:

- Ընկերության Պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարման շրջանակերում մատակարարվել է ընդամենը 3,886 հատ մանկական տակդիր՝ 365,284 ՀՀ դրամ ընդհանուր գնով:

- 07.12.2018թ. «Մարի Իզմիրլյանի անվան մանկատուն» ՊՈԱԿ-ի կողմից Պայմանագիրը միակողմանի մասնակի լուծվել է:

Բողոքներ քննող անձը գտնում է, որ «Ֆուդբազա» ՍՊԸ-ն Պայմանագրով նախատեսված ապրանքը համապատասխան ծավալով և ժամկետներում չմատակարարելով՝ խախտել է Պայմանագրի 1.1 կետով ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից Պայմանագրի միակողմանի լուծմանը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Բողոքներ քննող անձը գտնում է, որ առկա է «Ֆուդբազա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով սահմանված հիմքը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով, 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 13.12.2018թ. թիվ 27/26-3/23209-18 գրությամբ «ֆուդբազա» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 02673312) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք

չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել:

2. «Ֆուդբազա» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝

ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ